ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 1187-Ա/2 «24» 06. 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 501-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, 36-րդ հոդվածի 6-րդ մասի և «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» կետի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» լողի սիրողական մրցաշարի կանոնակարգը, մասնակցության հայտը հաստատելու մասին» 2022 թվականի մարտի 29-ի N 501-Ա/2 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հրամանի հավելված N 1-ի 5-րդ կետում «2022 թվականի հուլիսի 2-րդ տասնօրյակում» բառերը փոխարինել «2022 թվականի օգոստոսի 6-ին ժամը՝ 13:00-ին, մասնակիցները պետք է մրցավայր ներկայանան մրցումներից 2 ժամ առաջ, անձը հաստատող փաստաթղթով» բառերով:
2) հավելված N 1-ի 11–րդ կետում «4-ից 20-րդ տեղերը» բառերը փոխարինել «4-ից 10-րդ տեղերը» բառերով:
3) հավելված N 1-ի 14–րդ կետը շարադրել հետևյալ բովանդակությամբ՝«Դրամական մրցանակներ երկու տարիքային խմբերի 1-ից 10-րդ տեղեր գրաված մասնակիցներին՝ 1-ին տեղ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 600.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 400.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 150.000 ՀՀ դրամ, 5-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 6-10-րդ տեղերը՝ 75.000 ՀՀ դրամ, հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն, ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:»:
4) հավելված N 1-ի 16-րդ կետում «հուլիսի 10-ը ներառյալ» բառերը փոխարինել «հուլիսի 22-ը ներառյալ» բառերով:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

6/23/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 501-Կ/Ա

«29» Մարտի 2022 թ.

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԼՈՂԻ ՄՐՑԱՇԱՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի «ա» և «գ» կետերի՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել՝

1) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» սիրողական լողի մրցաշարի մասնակցության հայտը՝ համաձայն № 2 հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

3/29/2022

X

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Signed by: DUMANYAN VAHRAM 1909620211

Հավելված № 1
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի դեկտեմբեր 29-ի
№ 501-Ա/2 հրամանի

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ԼՈՂԻ ՍԻՐՈՂԱԿԱՆ ՄՐՑԱՇԱՐԻ

I. ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. 2022 թվականին անցկացվող «Հայաստանի Հանրապետության վարչապետի գավաթ» լողի սիրողական մրցաշարի (այսուհետ՝ Մրցաշար) նպատակն է՝

1) մասսայականացնել լող մարզաձևը Հայաստանի Հանրապետությունում,

2) բնակչության տարբեր տարիքային խմբերի առօրյայում արմատավորել ֆիզիկական վարժություններով մշտապես զբաղվելու, առողջ կենսակերպի գաղափարը:

2. Խնդիրներն են՝

1) զանգվածային սպորտի և ակտիվ կենսակերպի քարոզչության ապահովում,

2) լողի կանոնավոր պարապմունքներին բնակչության (միջին և բարձր տարիքի անձանց) ներգրավվածության ապահովում, առողջ ապրելակերպ վարելու նկատմամբ հետաքրքրության բարձրացում:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

3. Մրցաշարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն):

4. Մրցաշարի կազմակերպումն ու անցկացումը իրականացնում է Նախարարության կողմից հաստատված հանձնաժողովը՝ համագործակցելով «Հայաստանի լողի ֆեդերացիա» ՀԿ-ի հետ (այսուհետ՝ ֆեդերացիա):

III. ԺԱՄԿԵՏԸ ԵՎ ՎԱՅՐԸ

5. Մրցաշարը կանցկացվի 2022 թվականի հուլիսի 2-րդ տասնօրյակում, Սևանա լճում՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Շորժա համայնքին հարակից լողափնյա տարածքում:

IV. ՄՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

6. Մրցաշարին կարող են մասնակցել ցանկություն ունեցող 18 և բարձր տարիքի անձինք, ովքեր ունեն տեղեկանք առողջության վերաբերյալ և Մրցաշարին մասնակցելու հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և ստանձնման պայմանագիրը (պայմանագրին կարելի է ծանոթանալ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կայքէջում՝ https://escs.am/ սիրողական մարզիկներ, ուսանողներ, պետական և մասնավոր ոլորտի աշխատողներ, միջազգային կազմակերպությունների և դեսպանատների ներկայացուցիչներ, օտարերկրացի զբոսաշրջիկներ):

7. Քաղաքացիություն չունեցող անձինք կարող են մասնակցել մրցումներին հաշվարկից դուրս:

8. Մրցաշարին չեն կարող մասնակցել այն անձինք, որոնց անունները ներառված են ՀՀ լողի վարկանիշային աղյուսակում (ռեյտինգ), կամ վերջին հինգ տարիների ընթացքում մասնակցել են լողի Հայաստանի Հանրապետության առաջնություններին, կամ միջազգային մրցաշարերին:

9. Մասնակիցներին չի թույլատրվում մասնակցել հիդրոհամազգեստով:

10. Մրցաշարը կանցկացվի երկու տարիքային խմբով՝

1) 1-ին տարիքային խումբ՝ 18-ից 35 տարեկան (1987-2004թթ.) կանայք, 18-ից 40 տարեկան (1982-2004թթ.) տղամարդիկ:

2) 2-րդ տարիքային խումբ՝ 36-տարեկանից (1986թ. ծնված) բարձր տարիքի կանայք, 41 տարեկանից (1981թ. ծնված) բարձր տարիքի տղամարդիկ:

3) Մրցաշարի անցկացման կարգն ու պայմանները որոշում է Նախարարության կողմից ստեղծված հանձնաժողովը:

4) Կանայք կմրցեն հազար (1000) մետր, իսկ տղամարդիկ՝ հազար հինգհարյուր (1500) մետր լողատարածություններում:

5) Հայտը ներկայացնող անձը պետք է հանձնի նախնական ստուգարք՝ մասնակցի լողանալու ունակության մակարդակը որոշելու համար, ֆեդերացիայի կողմից ընտրված լողավազանում:

6) 5-րդ կետի պահանջը չկատարելու դեպքում մասնակիցների մասնակցությունը մրցաշարին չի թույլատրվելու:

V. ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄԸ

11. Մրցաշարին երկու տարիքային խմբերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված մասնակիցները (տղամարդիկ և կանայք) պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով և դրամական մրցանակներով, իսկ 4-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցները՝ դրամական մրցանակներով, դեսպանատների ներկայացուցիչներ, օտարերկրյա քաղաքացիները և զբոսաշրջիկները՝ հուշանվերներով և հավաստագրերով:

12. Մրցաշարի բոլոր մասնակիցներին տրվում են հավաստագրեր: Արդյունքներն ամփոփվում են մրցումների ավարտից անմիջապես հետո:

VI. ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՉԱՓԵՐԸ

13. Մրցաշարի անցկացման հետ կապված ծախսերը՝ մրցավարների, փրկարարների և կամավորների սնունդ, ճանապարհածախս, մրցավարների պարգևավճար, ռադիոհանգույցի վարձակալում, լողափի ձևավորում, մարզահագուստ (մարզաշապիկներ, կամ գլխարկներ և համարներ բոլոր մասնակիցներին և մրցավարներին), գավաթներ, մեդալներ, հավաստագրեր, շնորհակալագրեր, կաշվե թղթապանակներ, ծաղկեփնջեր, հրավառություն, մասնակիցներին տեղում ընդմիջման ժամանակ սնունդ, հուշանվերներ՝ պատվավոր հյուրերին, հաղորդավարի ծառայություն, գովազդային նյութերի պատրաստում, նկարահանում, ուղիղ եթերի ապահովում, մրցավայրի ձևավորում, տրանսպորտային միջոցների ապահովում, բեռնատար ավտոմեքենաներ՝ մարզագույքը տեղափոխելու համար և գրենական պիտույքների ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

14. Դրամական մրցանակներ երկու տարիքային խմբերի 1-ից 20-րդ տեղեր գրաված մասնակիցներին՝ 1-ին տեղ՝ 1.000.000 ՀՀ դրամ, 2-րդ տեղ՝ 600.000 ՀՀ դրամ, 3-րդ տեղ՝ 400.000 ՀՀ դրամ, 4-րդ տեղ՝ 150.000 ՀՀ դրամ, 5-րդ տեղ՝ 100.000 ՀՀ դրամ, 6-10-րդ

տեղերը՝ 75.000 ՀՀ դրամ, 11-20-րդ տեղերը՝ 50.000 ՀՀ դրամ, հարկերը, տուրքերը և պարտադիր վճարները ներառված չեն, ծախսերը կատարվում են ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին:

15. Մասնակիցների գործուղման ծախսերը (գիշերակաց, սնունդ և ճանապարհածախսը) հոգում է գործուղող կազմակերպությունը:

VII. ՀԱՅՏԵՐԸ

16. Մրցաշարին մասնակցության համար ներկայացվում է հայտ՝ համաձայն հավելված 2-ի, անձնագրի կամ նույնականացման վկայականի և մրցումներին մասնակցելու համար բժշկի թույլտվության պատճենները, կամ տեղեկանք առողջության վերաբերյալ և Մրցաշարին մասնակցելու հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և ստանձնման պայմանագիրը: Փաստաթղթերը ներկայացնել «ՀՀ լողի ֆեդերացիա» ՀԿ-ին՝ մինչև 2022 թվականի հուլիսի 10-ը ներառյալ (Հասցե՝ «Դավիթ Համբարձումյանի անվան ջրացատկի օլիմպիական հերթափոխի մասնագիտացված մանկապատանեական մարզադպրոց» ՓԲԸ-ի լողավազան, Մ. Խորենացի փ. 1/1, էլ. հասցե՝ swimmingarm@mail.ru): Հարցերի դեպքում զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով՝ **(010)56-44-60** մասնագիտական հարցերի դեպքում զանգահարել **(077) 84-40-41, (091) 84-40-41, (055) 84-40-41,** երկուշաբթի-ուրբաթ օրերին՝ ժամը 09:00-18:00:

Հավելված № 2
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի հունիսի 29-ի
№ 501-Ա/2 հրամանի

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐԶԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ» ՍԻՐՈՂԱԿԱՆ ԼՈՂԻ ՄՐՑԱՇԱՐԻ ՀԱՅՏԻ

№	*Ազգանուն, անուն, հայրանուն*	*Ծննդյան թիվը*	*Անձնագիր, (սերիա, համար)*	*Բնակության վայրը, հասցեն*	*Հեռախոսի համար*
1.					
2.					
3.					